

յաջողի օրինակը էստամպաժով վերցնել: Թափած քարերից երևում է, որ արձանագիրը գրուած է եղել մեծ քարափի ճակատին, և յետոյ պոկուել ընկել է և ծածկուել քարերի ներքե:

Արձանաքարի և Արասխի մէջ տեղովը անցնում է Սարգարապատի ջրանցքն (առուն), որոյ սկիզբը արձանագրութիւնից 1¹/₂ վերստ վերև Արուանդակերտի բերդի հանգէպն է, գուցէ այս ջրանցքը հին ժամանակից պատրաստած լինի, որը յետոյ վերջին դարուս մէջ Արևանայ Սարգարը նորոգել տալով՝ Արասխից ջուր է հանել դաշտը և Սարգարապատը շինել, և շատ հաւանական է, որ ընդարձակ «Արմաւիրեան դաշտը» (Արմաւու դուղ) մեր նախնեաց ժամանակը մշակուած էր ամբողջովին ծածկուած արտերով և ծառաստաններով (Սօսեաց անտառ):

Այս արձանագրութիւնը 20 րդն է իմ դտած նոյնպիսի արձանագրութիւններից, որոնք տպուած են «Արարատի» էջերում զանազան ժամանակներում:

Խմբագրութեանդ յառաջագիմութիւն ցանկացող
ՄԵՍՐՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՏ ՄՄԱՏՏԵՆՑ:

30 Մայիս 1895 ամի.

Ս. ՆՃԻՄԻԱԾԻՆ.



ՏՈՐԻՈՒՆՏՈ — ՏՈՒՍՈ

(Նրա մահուան 500-ամեակի առթիւ)
1393 — 25 ապր. 1893

Սան հանձարներ, որոնք անմահացել են իրանց մի շարք երևելի գրուածքներով, Բայց կան և հանձարներ, որոնց յիշատակը անցնում է սերնդէ սերունդ և այսպիսով անմահանում է մարդկային յի-

1 Որպէս զի արձանագիրը անսխալ եւ թիզ լինելով, մինչեւ յօղուածիս տպագրութիւնը ուղարկեցի Աթ. Մեսրոպ Վարդապետ Տէր Մովսիսեանցին եւ խաչիկ Վարդապետ Դատեանին Երուանդակերտ, որը լուսանկարով անմար գտնելով առնել օրինակը, վերցրել էին Էստամպաժով, որի համեմատ ուղղագրելով մեր օրինակածը՝ ահա յանձնում ենք տպագրութեան:

շողութեան մէջ ոչ թէ նրանց բազմաթիւ շարագրութիւնների, այլ մի որ և է գլուխ գործոցի շնորհիւ, Մինչդեռ Շէկապիրի անունը տալիս մենք իսկոյն յիշում ենք նրա բոլոր թատերական գրուածքները, մինչդեռ Գէօթէի և Շիլլերի հանձարը ամփոփուում է նրանց ամբողջ գրականական գործունէութեան մէջ, ահա Գանտէն, Սերվանտէսը, Միլտոնը, որոնց անունների հետ են կապուած միմայն նրանց գլխաւոր գրուածքները՝ «Աստուածային կատակերգութիւնը», «Դոն Գիշտը», «Արուեսալ Դրախտը»:

Վերջիններիս թուին է պատկանում և իտալացի անմահ բանաստեղծ Տորկուատո Տասսօն:

Եւ եթէ մենք այսօր նրա մահուան 300-ամեակի լրանալու առթիւ ուղում ենք ծանօթացնել ընթերցողներին Տասսոյի հետ՝ աչքի առաջ ունենք ոչ թէ՝ «Ամինտա» հովուական դրամայի հեղինակին, ոչ թէ շնորհալի սիրային բանաստեղծութիւններ յօրինողին, այլ բացառապէս այն Տասսոյին, որ ստեղծել է հրաշալի «Ազատուած Երուսաղէմ» անունը կրող վիպասանութիւնը:

Habent sua fata libelli ասում է հռոմէացի բանաստեղծներից մէկը, Իւր ձակատագիրն է ունեցել և «Ազատուած Երուսաղէմը», որի հետ կապուած է հեղինակի գրեթէ ամբողջ կեանքը, Եւ ինչպիսի՞ կեանք, մերթ շրթը և երջանիկ, մերթ մռայլ և դաժան, միշտ անհանգիստ, միշտ փոփոխական, որպէս զարնակային եղանակը:

Տորկուատո Տասսօն ծնել է 1544 թ. մարտի 11-ին իտալական փոքրիկ, բայց գեղեցիկ Սօնէնտօ քաղաքում՝ նրան վիճակուեց ապրիլ այնպիսի մի ժամանակ, երբ նորածին ճիզոխտական միաբանութիւնը հսկայական ցանցերով էր ձանկում ամբողջ Եւրոպան, հուր և հալածանք սպառնալով ամէն մի կաթոլիկի, որ կը յանգզէր բողոքել ճիզոխտական խարդախութիւնների ու բռնակալութեան դէմ: Մասնաւորապէս Իտալիայում նա ջանում էր արդէն սաղմի մէջ ոչնչացնել ամէն մի ազատ միտք և խօսք, յաջողութեամբ կուում էր վերածնութեան շրջանի հանձարեղ, բայց կաթոլիկութեան տեսակէտից թեթեւամիտ գրականութեան հետ, Վաթոյիկութիւնը կարծես նոր կեանք և ջոժ էր առել. միջնադարեան միստիքականութեան և միայնակեցական կեանքի հետեւողների թիւը քանի գնում մեծանում էր, Միկելանջի ժամանակը անդադար գործում էին ինկուիզիցիան, առւտո-դա-ֆէն, հալածանքը և այլ խիստ միջոցները, Վերածնութեան շրջանի հենց սկզբից գրականական գործիչները (հումանիստները) և գեղարուեստագէտները միշտ աշխատում էին խմբուել մի որ և է հարուստ և նշանաւոր հովանաւորողի, մե-

կենսաի շուրջը, Մեդիչի ազգատոհմից ամենանշանաւոր մեկնանանքն են առաջ եկել. Ֆլորէնցիան՝ նրա բնակավայրը, վերածնութեան շրջանի գլխաւոր կենդրոնն է եղել, Բայց երբ Զեռուամօ Սաւոնարոլայի օրով Մեդիչիներին քշեցին իրանց Հայրենիքից, Ֆլորէնցիան կորցրեց իւր նշանկութիւնը, նրա փոխարէն ծաղկեց Ֆէռարա քաղաքը, որտեղ իշխում էին Գլ'ստէ գ.քսերը, Ֆէռարացի Ալֆոնս Գ.քսի հովանաւորութիւնն էր վայելում ինչպէս և ուրիշ բանաստեղծները մի այլ հրաշակաւոր խաղացի բանաստեղծ — Երիստոն, («*Il rlando furioso*»-ի (Սատարի Ռոլանդ) հեղինակը, Ֆէռարայի դքսութեան հետ է կապուած և Տասնոյի կեանքի պատմութեան մեծ և ամենանշանաւոր մասը, Տորկուատոյի Հայրը, որ նոյնպէս բանաստեղծ էր և վերին աստիճանի խելօք և գործունեայ անձնաւորութիւն, վարում էր նէպոլիսի Սանսերինօ իշխանի քարտուղարի պաշտօնը և երբ որ քաղաքական հանգամանքները ստիպեցին Սանսերինոյին թողնել իւր Հայրենիքը և թափառական կեանք վարել — նրա հաւատարիմ քարտուղարը հետեց նրան, եւ մինչդեռ Բէռնարդօն թափառական կեանք էր վարում տեղափոխուելով Իտալիայի մի քաղաքից միւսը՝ նրա բնտանիքը մինչեւ էր նէպոլիսում, փոքրիկ Տորկուատօն էլ սովորում էր այստեղ ճիգովիաների վարժարանում, Բայց 11 տարեկան հասակում նա արդէն գնում է հօր մօտ, որ այդ ժամանակ գտնուում էր Հռոմում և այլ ևս չի բաժանուում նրանից, Այստեղ հասնում է նրան իւր սիրեցեալ մօր մահուան գոյժը և թախծալից գրում է նրա յիշատակին մի սրտաբուլիս ձեռն, նոյն այդ ժամանակ նա 12 տարեկան հասակում օգնում էր հօրը՝ «Ամագիս» վիպասանութիւնը մշակելու գործում, Քսան տարի անցած նա «*O del grand Apenino*» բանաստեղծութեան մէջ ողբում է իւր և իւր ծնողների չար բաղձը, Տորկուատօն այս բանաստեղծութեան մէջ համեմատում է իրան Յուլիոս — Ասկանիասի հետ, իսկ հօրը — Նեւէասի, որ Տրովադայի անկումից յետոյ փախաւ եկաւ Իտալիա, Բէռնարդօն, չնայած իւր նեղ դրութեանը, չի մոռանում հօգալ որդու ուսման մասին և ուղարկում է նրան Բոլոնիայի նոր բացուած Ճեմարանը, որտեղից յետոյ Տորկուատօն տեղափոխուում է Պադուայի համալսարանը, Քրականական հակումները երևում են նրա մէջ արդէն իսկ համալսարանական նստարանի վերայ, Իրաւաբանական և փիլիսոփայական աւարկաների հետ զուգընթացաբար նա առանձին ոգևորութեամբ ուսումնասիրում էր հին և նոր գրականութիւնը և փորձեր է անում արդէն սեփական բանաստեղծութիւններ

գրելու, Յափշտակուած իւր մեծ հայրենակից Արիօտոյի գրուածքներով, Տորկուատօն գրում է 18 տարեկան հասակում է իւր «Ռինալդօ» վիպասանութիւնը, որի վրայ իսկոյն երևում է Արիօտոյի աղգեցութիւնը, Արդէն ձեռագրներով տարածուած այդ գիւցաղներգութիւնը ամենաճիշդ ընդունելութիւնն է գտնում և չափազանցութեան հասցրած գովասանքի է արժանանում, Ելացած այս հաճոյախօսութիւններից և գովասանքներից Տորկուատօն իւր մէջ ոյժ է զգում մի մեծ, անմահ վիպասանութիւն գրելու, որին և նուիրում է այնուհետեւ իւր բոլոր ուշք ու միտքը, Պետք է ասել, որ այդ գովասանքները և հիացումները ունեցան և իրանց վատ հետեւանքները՝ զարգացնելով բանաստեղծի մէջ մեծամոտութիւն և փառասիրական ձգտումներ, որոնց գերին էր նա իւր երիտասարդութեան ժամանակ,

Արդէն Բոլոնիայում Տորկուատօն սկսում է գրել «Աղատուած Երուսաղէմի» առաջին երգը, բայց — երեւի իրան անպատրաստ զգալով — թողնում է, նա սկսում է գիտնականի բարեխղճութեամբ ուսումնասիրել, Հոմերոսին և Աերգիլիոսին, յունական փիլիսոփայութիւնը, միջնադարեան կաթոլիկութիւնը, Այդ ուսումնասիրութիւնների արդիւնք պետք է համարել նրա 1565 թ. կազմած «Խորհրդածութիւններ բանաստեղծական արուեստի և մասնաւորապէս գիւցաղներգութեան մասին», Այս երեք խորհրդածութիւնների մէջ (*discorsi*) հեղինակը մանրամասնօրէն խօսում է վիպասանութեան ձևի և պարունակութեան մասին, ցոյց է տալիս ի՞նչ տարրերից կարող է նա կազմուած լինել, ի՞նչ է պարտական մտցնել դրա մէջ հեղինակը և ինչից պետք է հեռու մնայ, Այս տեսութիւնը նա յետոյ գործադրում է իւր հռչակաւոր «Աղատուած Երուսաղէմում», որի վերայ աշխատել է զանազան ընդհատումներով 17 երկար տարի, Համալսարանը աւարտելուց յետոյ Տորկուատօն ծառայութեան է մտնում Գլ'ստէ կարգինալի մօտ, որին նա նուիրել էր իւր առաջին մեծ գործը, Իսկ հինգ տարի անցած մենք տեսնում ենք նրան արդէն Ֆէռարայում, կարգինալի եղբոր Ալֆոնս Բ. դքսի մայրաքաղաքում, Դեռ կարգինալի մօտ Տորկուատօն վարում էր շքեղ և ազնուականի ուրախ կեանք, իսկ դքսի մօտ տեղափոխուելուց յետոյ նրա գրութիւնը աւելի ևս բարձրացաւ:

Իրեւ պալատական բանաստեղծ նա ապրում է Ֆէռարայի դքսի հարուստ պալատում, շրջապատուած ամէն տեսակ ճոխութեամբ և շքեղութեամբ, նրա յօրինած փոքրիկ քնարական երգերը (*concetti*), որոնց մէջ բանաստեղծը երգում է սէր և ուրախութիւն, անցնում էին ձեռքէ

ձեռք, բերանէ բերան և այդպիսով մեծացնում քանաստեղծի հոգակը և նրա հովանաւորող գրքի փառքը: Գրքի երկու քոյրերը, առանձնապէս Էլէօնօրան, նամանաւանդ փառաբանում էին այդ զոգտրիկ սիրային բանաստեղծութիւնների մէջ: Սակայն մի քանի հանգամանքներ ապացուցանում են, որ Տօրկուատօն այդ անում էր աւելի հաւատարիմ մնալով իւր պալատական երգչի պաշտօնին, քան թէ սէր կամ համակրութիւն զգալով դէպի օրիորդը: Օրինակ օրիորդի մահը, որի մասին նա իմացաւ օտարութեան մէջ, բանաստեղծի վերայ կարծես ոչ մի տպաւորութիւն չի թողնում: Նրա համար անցնում է բոլորովին աննկատելի: Այստեղ պալատում նա գրում է գրքի թատրոնի համար մի հոգեւերգական դրամա (պատօրայ) «Ամինտա» և վերջացնում է «Ազատ. երուս.» սեագիրը: 1575 թ. Տօրկուատօն գնում է Հոռով հեղինակաւոր մարդկանց կարծիքը հարցնելու իւր մեծ գործի մասին: Նա շատ համակրողներ գտաւ, բայց աւելի շատ քննադատներ և յարձակումներ, որոնք այն աստիճանի վրդովեցնում էին բանաստեղծին, որ նա ժամանակ առ ժամանակ, ներառյալին ցնցումների պատճառով, խելագարութեան էր հասնում, բայց յետոյ էլի հանգստանում: Խելքը գլուխը գալիս, նրա երեւակայութիւնը անշուշտ հիւանդ էր, որ նա ինքն իրան մատնեց ինկուիզիցիային՝ մեղադրելով իրան հերետիկոսութեան մէջ:

Այսպիսի դրութեան մէջ նա թողնում է Հրոռովը, գնում է իւր հայրենիքը՝ Սոգնետօ քաղաքը, յետոյ էլի Հոռով, այնտեղից Ֆեռարա, որտեղից փախչում է և ապա երբ 1579 թ. փետրուարի 21-ին նա կրկին վերադառնում է Ֆեռարա — դուքսը հրամայում է ընկել նրան, իրեն խելագարի, և ամբողջ 7 տարի պահում է նրան սուրբ Աննայի վանքում:

Մինչ դժբաղդ Տասսօն արգելուած էր վանքում՝ նրա «Ազատուած երուսաղէմը» թեպէտեւ ձեռագիր օրինակներով — արդէն մեծ աղմուկ էր հանում: զրեթէ միարեւրան խոստովանում էին, որ այդ վիպասանութեան հեղինակը մեծ տաղանդ ունի, իսկ այդ գործը — միակն է իւր տեսակում՝ իտալական գրականութեան մէջ: Ահա այդ ժամանակը, առանց հեղինակի թոյլտուութեան, տպագրւում է «Ազատուած երուսաղէմը»: Ահա նրա կարճագուրովանդակութիւնը. «Երգում եմ Քրիստոսի գերեզմանը ազատող զօրավարի սուրբ կոիւր» — այսպէս է սկսում բանաստեղծը իւր դիւցազներգութիւնը՝ առաջին իսկ տողից հետեւելով Հոմերոսին ու Վիրգիլիոսին, Յետոյ XX երգերի մէջ Տասսօն պատմում է թէ ի՞նչպէս խաչակիրները

բարեպաշտ Գոտֆրիդ Բուլօնացու առաջնորդութեամբ 6-ամեայ արշաւանքից յետոյ մօտենում են սուրբ քաղաքին և պատրաստւում են այստեղ կամ պաշարւում ստիպել Երուսաղէմի Ալադին սուլթանին անձնատուր լինել և կամ յարձակում անել և առնել քաղաքը: Եւ ահա բանաստեղծը մանրամասնօրէն, քայլ առ քայլ պատմում է այն բոլոր կռիւնները, մենամարտութիւնները, անցքերը և դէպքերը, որ տեղի են ունեցել քրիստոնեաների և մահմետականների բանակների մէջ մինչև Երուսաղէմի առումը խաչակիրների ձեռքով:

Նա իւր խորհրդածութիւնների մէջ այն կարծիքն էր յայտնել՝ թէ «պէտք է վիպասանութեան համար այնպիսի բովանդակութիւն («-+-») ընտրել, որ նա կարողանայ ընդունել ամէն տեսակ գեղարուեստական ձևեր և բանաստեղծական զարգարանքներ: Վիպասանութեան մէջ ճշմարտութիւնը (իրողութիւն) պէտք է խառն լինի հրաշքի հետ, այդ երկու տարրերը կարելի է միացնել միմիայն քրիստոնէական «-+-» մէջ, որտեղ հրաշքներ կարող են տեղի ունենալ, որտեղ կարող են Աստուած, նրա հրեշտակները, դեւերը, սրբերը, յաւերժահարսները և կախարդներ գործել: Վիպասանութեան մէջ նկարագրուած սիրագործութիւնները պէտք է փառաւոր և վսեմ լինին, հերոսները քաջագործ, մեծահոգի, բարեպաշտ և նուրբ — քաղաքավարի, պատմութիւնը (էպոպոս) պէտք է ներկայացնէ բոլորովին ամբողջ և վերջացած գործ և պէտք է պահպանուած լինի գործողութեան միութիւնը»: Տասսոյի այս խորհրդածութիւնները մենք մէջ բերինք այն պատճառով, որ նա ամենայն ճշգրտութեամբ հետեւում է նրանց: «Ազատ. երուս.» մէջ գործում են ոչ միայն Գոտֆրիդը, Ռինալդը, Ալադին և այլն, այլ և Բէհեմոնդէրուդը և դեւերը, Միքայէլ հրեշտակապետը, սրբեր և կախարդներ, որոնցից չար ոգիները օգնում են մահմետականներին, իսկ բարի ոգիները — քրիստոնեաներին. և որովհետեւ լոյսը յաղթող է, ուստի և խաւարի ծնունդները խորտակուում են և խաչը յաղթող է հանդիսանում: Դիւցազներգութեան իդէալը Հոմերոսի Իլիականն էր, ուստի նա ինքն էլ է գրում Հոմերոսի ոգւով, միմիայն ոլիմպիական աստուածների փոխարէն գնում է քրիստոնէութիւնը և յունական հերոսների փոխարէն — խաչակիրներին, Սակայն Տասսօն տեղ-տեղ օգտուում է և յունաց դիցաբանութիւնից ու ասպարէզ է դուրս բերում հեթանոսական աստուածներին — խառնելով ուրեմն իւր վիպասանութեան մէջ քրիստոնէութիւնը հեթանոսութեան հետ: Բայց Տասսօն մի նորմութիւն էլ է անում՝ դիւցազներգութեան մէջ —

այն է մոցնում է սիրային պատմութիւնը, ուսման-
տական տարրը՝ նրա հերոսները սիրահարուում են
մահմեդական կանանց վերայ, կինը իւր գեղեցկու-
թեամբ հրապուրում գիւթում է մենամարտողին և
այն Արանով նա վէպի նշանակութիւնը անշուշտ
բարձրացնում է — մոցնելով նրան գիւցաղներգու-
թեան մէջ, որ շատ յարգուած էր այն ժամանակ և
որի վերայ նայում էին իրրեւ մի սրբութեան վերայ,
Բայց հենց այս նորմուծութիւնը դուր չեկաւ դա-
սական հեղինակների սիրահարներին, որոնք գիւ-
ցաղներգութեան վեմ ընդհանրութեան մէջ սի-
րահարական վէպ մոցնելը սրբապղծութիւն համա-
րեցին և չղլացան հալածել այս նոր գրութեանը,
Դուր չեկաւ Տասսոյի գիւցաղներգութիւնը և ծայ-
րայեղ կաթողիկէներին, որոնք նախ փրպական մասը
թեթեւամտութեան ծնունդ էին համարում և ասում
էին թէ նա պղտորում է փրպասնութեան թողած
բարեպաշտութեան զգացմունքը, և երկրորդը, որ
կաթողիկէ փրպասնութեան մէջ հեղինակը պէտք է
հետու մնար հեթանոսական գրականութեան աղ-
ղեցութիւնից, Աւերածնութեան շրջանի ներկայա-
ցուցիչները, որոնք բողոքականութեան առաջին հիմ-
նաքարերն էին դրել, ի հարկէ անբաւական էին, որ
Տասսոն իւր գիւցաղներգութեան մէջ կաթողիկու-
թեան փառաբանող է հանդիսանում: Բայց նա ու-
նէր և բազմաթիւ համակրողներ, որոնց թիւը մա-
նուածք մեծացաւ նրա կեանքի վերջի տարիները և
ապա մահից յետոյ:

Ժիշդ է, Տասսոն իւր գլխաւոր նպատակին չը
հասաւ, այսինքն չկարողացաւ իւր կէս—փրպա-
կան, կէս—կրօնական գիւցաղներգութեամբ բարձ-
րացնել կաթողիկէների կրօնական զգացմունքը և կա-
թողիկութեան նշանակութիւնը, որի հիմքը այդ ժա-
մանակ արդէն սկսել էր շարժուիլ, Այնուամենայնիւ
նրան յաջողուեց ստեղծել մի այնպիսի երկ, որ
ամենայն ճշգրտութեամբ արտափայլում էր իւր մէջ
ժամանակակից Բողոքականի և նրա շրջակայ պետու-
թիւնների տրամադրութիւնը, իսկ այդ տրամադրու-
թիւնը ոչ այլ ինչ էր, բայց եթէ կաթողիկութեան
հեղինակութեան ու փառքի վերականգնումը:

Բացի գրանից նա այնպիսի տաղանդով կատա-
րեց աղգային գիւցաղներգութիւն գրելու գործը, որ
նրանից յետոյ Եւրոպայի գրեթէ բոլոր աղգների մէջ և
բեւեցան բանաստեղծների, որոնք խրախուսուած Տաս-
սոյի օրինակից՝ կամեցան նոյնպէս տալ իրանց աղգին էլ
սեփական գիւցաղներգութիւն: Բայց արդէն Տաս-
սոն հետեւելով դասական հեղինակներին և կանոն-
ներին ստեղծեց մի այնպիսի երկ, որ ոչ դասական
էր—որովհետեւ քրիստոնէական էր և ոչ էլ աղգա-
յին, իտալական, որովհետեւ դասականի աղգեցու-

թիւնը շատ մեծ էր, Տասսոյի հետեւողները աչքի
առաջ ունենալով ոչ թէ դասական հեղինակու-
թիւնները, այլ «Ազատուած Երուսաղէմը» և այլ
թիւնները, գիւցաղներգութիւններ — բոլորովին շե-
տոյնպիսի գիւցաղներգութիւններ — բոլորովին շե-
ղուեցին մի կողմ և կենդանի ու պարզ գիւցաղներ-
գութեան փոխարէն, որպիսին է Իլիական և մա-
սամր Տասսոյի փրպասնութիւնը, տունն Հեներիա-
դաներ, Հայկ Գիւցաղներ և այլն: Այսպէս առաջ
եկաւ այն գիւցաղներգութիւնը, որ կեղծ-դասա-
կան է կոչուում:

Տասսոն օժտուած էր վառ երեւակայութեամբ,
ունէր գեղեցիկ-պատկերական ոճ և առանձին տա-
ղանդով էր նկարագրում զժրագող սիրոյ տանջանք-
ները, Այս բոլորը «Ազատ. Երուսաղէմում» միա-
ցել են հեղինակի բուռն զգացմունքների և ջերմ
հաւատի հետ, որոնք դուրս են բերուած բանաս-
տեղծի հանճարեղ և նուրբ գրչով, և այդ է, որ
գրաւում է և ոգևորում «Ազատուած Երուսաղէմ»
ամէն մի ընթերցողի:

Բայց մինչ նոր լոյս տեսած գիւցաղներգու-
թիւնը գեր և գէւմ կարծիքներ էր յարուցանում—
ինքը հեղինակը տանջուում էր բարոյապէս և ֆի-
զիկապէս: Ֆէոարայի դուքսը միմիայն հզօր մարդ-
կանց խնդրանքներին զիջանելով 1586 թ. աղատեց
խեղճ Տասսոյին բանդից:


Խրախուսուած իւր գրականական յաջողու-
թիւններից նա գրում է 1593 թ. մի նոր գիւցաղ-
ներգութիւն «Նուաճուած Երուսաղէմ»: Բայց սա
թէ ընդհանրականութեան և թէ ձեւի կողմից շատ թոյլ
է և ամենեւին չի կարող հաւասարուել նրա «Ազատ.
Երուսաղէմ» հետ, որ և մնում է նրա գլուխ գոր-
ծոցը:

Բանդից արձակուելուց յետոյ Տասսոն շա-
րունակ թափառում է քաղաքէ քաղաք և կարծես
մի վայր էր փնտռում ընդ միշտ հանգստանալու հա-
մար, Բարոյական յուզմունքների վերայ շուտով ա-
ւելանում է և նիւթական անտպահովութիւնը, ապա
և աղքատութիւնը, Այս փիճակի մէջ էր նա գրա-
նուում երբ Ուերմանտ VII պապի ազգական՝ Ալբո-
րբանդինի կարգինալը, Տասսոյի տաղանդի երկրպա-
ղուններից մէկը, կարողացաւ համոզել պապին և Հռոմ-
ի ձերակոչտին՝ պսակել Տասսոյին իրրեւ աղգային մեծ
բանաստեղծի: Եւ ահա խուռն բաղմունքիւնը, զար-
դարուած և պճնուած փառաւոր հանդիսով ընդա-
ռաւ էր զալիս Տասսոյին, որ նէպաօլիսից յատուկ
գրա համար եկել էր Հռոմ: Բայց նա հիւանդ էր,
ուստի պսակադրութեան հանդէսը յետաձգուեց մի-
շւե գարուն, այժմ՝ միայն յայտնեցին ի գիտութիւն
ամենեցուն թէ ինչ մեծ պատուի է արժանացել
Տորկուատո Տասսոն, Երջանիկ բոպէներ էին դրանք:

բայց աւելի երջանիկ և փայլուն բոսկենքեր նա երազում էր ապագայում: Սակայն անբաղդ բանաստեղծին վիճակուած չէր տեսնել այդ բոսկենքերը: 1595 թ. ապրիլի 25-ին նա արգէն մեռած էր: Միմիայն նրա անշնչացած դիակը արժանացաւ ազգային այդ մեծ պատւին և առանձին հանդիսով պսակուեց Հռոմում: Յաւիտենական քաղաքի պատմական բլուրներից մէկի վերայ, Սուրբ Օնուֆրիոսի վանքում—ուր պատուարուած էր հիւանդ բանաստեղծը և ուր նա վախճանուեց—կայ մի հասարակ գերեզմանաքար, որ իբրեւ սրբութիւն գրաւում է բոլոր ուխտաւորներին:

«Torquati Tassi ossa hic jacent» (այստեղ հանգչում են Տորկուատո Տասսոյի ոսկրները) գրուած է այդ գերեզմանաքարի վերայ:

Մ. Բերբերեան:



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՇՈՒՌՏ ԵՒ ԴՈՒՎԱԹ.

(Ժողովրդական հաւատալիք):

Հուռտներն ըստ հայոց հեթանոսական աւանդութեան անտեսանելի ոգիներ են և անթիւ. Դոլվածներն ևս անտեսանելի ոգիներ են, բայց սակաւաթիւ:

Հուռտներն սերած են նոյ նահապետի Բամ որդիէն, երբ նոյ տապանն մտաւ, ըստ Աստուածաշունչ սուրբ գրոց «Եմուտ նոյ և որդիք նորա» կին նորա և կանայք որդւոց նորա» ասելով՝ նոյր իր կնոջմէ, որդիքն իրենց կանանցմէ բաժանուած կը համարուի: որովհետեւ նոյի անունը յիշելէ անմիջապէս յետոյ, կնոջ անունը յիշելու որդւոց անունը յիշած է: նոյնպէս որդւոց և որդոց կանանց մէջ տեղ իրենց մօր անուն յիշած է: Այսպէս ոմանք (Ժողովուրդէն) կուզեն հաստատել թէ, տապանը սուրբ է, պէտք է այնտեղ սրբութեամբ անցնել:

Բամ անհաւատարիմ՝ զանուելով Աստուծոյ կարգադրութեանը, տապանի սրբութիւնը չյարգելով մերձեցաւ իր կնոջ, որմէ ունեցաւ մի որդի:

Անցաւ մի տարի, Աստուծոյ հրեշտակն երբ տապանի դուռն բացաւ, ուժ չոգին համարելով՝ դուռն հանեց: հարցուց Բամին:

— Աւրիշ մարդ կայ ներսը:

— Չկայ, պատասխանեց ամթաճհար Բամ:

— Եթէ կայ, չիք դառնայ, ասաց հրեշտակն:

Նորաձին մանուկը աներեւոյթ ոգիի մը փոխուեցաւ: օր ըստ օրէ զօրացաւ: մարդկային սերունդին հետ ամուսնացաւ, ունեցաւ զաւակներ: որք ևս աներեւոյթ ոգիներ են:

1. Փետրուար ամսուն Շուռտ կասեն Բագրեւանդայ հայեր, իսկ Թուրքեր Շուպաթ. նաեւ անտեսանելի ոգիներուն Շուռտ. մենէ աղէկներ, այլ տեղեր յալըրէ, Մելքտին, եւ այլն:

Հուռտներն շատ աճեցան նոքա ծնունդ ունին, իսկ մահ հուռն. վասն որոյ աշխարհի ամեն կողմ բռնած են:

Դոլվածներն, որպէս ասացի, սակաւաթիւ, բարի ոգիներ են, նոքա բնակութիւն հաստատած են միայն հարուստ տներու մէջ, նաեւ այն տներու մէջ գտնուած լաւ լաւ եղներու և դռնէններու մտուրքն է իրենց բնակարարն: իրենց գտնուած տունը ամեն բարեօք պիտի լեցնեն:

Հուռտներն որչափ որ անտեսանելի ոգիներ են, սակայն ուտող և սպառող բնութիւն ունին, այն տնէն որ դոլվածն բացակայ է, ամեն ինչ կը վերջացնեն, կը մոռնն նաեւ դոլվածնոր տներ, կսկսին սպառել մարդկային աշխատութեան արգիւնքը և դոլվածին լցած բարիքը:

Դոլված կայցելէ իր բնակած տան ամեն մասերը, շուռտի սպառածի տեղն անմիջապէս կը լրացնէ. դարձեալ իր տեղն կը հաստատուի:

«Հուռտն մեղաց պտուղ ա», սուրբ ամուսնութենէ ծնած չեն, որոյ համար ամեն չարութիւն ի գործ կը դնեն, խմբով կը շրջապատեն ցորեանի հորն, այիւրի ամբարն, եղի բոյկը:

Նիհար ու հիւանդոտ անասուններն կը շրջապատեն, կսպանեն որ սատակի, չար և ազացի հարկանող և վնասակար անասուններն կը սիրեն, այն ինչ որ դոլված չսիրեր. կամուսնանաւ մարդոց հետ երբ մարդիկ, քնոյ մէջ են. շատ անգամ կը յիշեն մարդիկ, որ երազի մէջ ամուսնացած են, նոքա շուռտներ են, որով զաւակներ կուենան:

Այսպէս այս «մեղաց պտուղներն» մի օր աշխարհ կը լեցնեն, այլ ևս մարդկանց բնակութեան վայր մի չպիտի մնայ:

Հուռտներն կը սիրեն տաք վայրեր. իրենց փորը կշտացնելու համար տան ամեն մասերու հետ յարաբերութիւն ունին, ասեղի մի ծակէն անգամ կարող են անց ու դարձ անել, Տաք տեղերն կաճին ու կզօրանան, ցուրտ տեղերն կընկճին և կը հիւծին: Դոլվածներն բարի նախանձէ շարժեալ կըլին և կըկին այցելութիւն կտան աշխատասէր գոմշու, եղան, կթան կովու, ցորեանի հորի, այիւրի ամբարի, տան շուրջը և մառաւր, շուռտի սպառածը կը լրացնեն:

Կայցելեն նաեւ գոմը, կը բառնան ոչխարներու հիւանդութիւնը:

Այսպէս յաճախ դոլվածին շինածը շուռտ կը քանդէ, շուռտի սպառածի տեղն դոլված կը լրացնէ: Փետրուար ամսոյ մէջ մրցումը մեծ է:

Ամբողջ ձմեռն դռները փակ էին, ներսը տաք և բարիքով լեցուն էր, մարդոց այնչափ հոգ չէր որ շուռտներն կսպառեն, զի սպառուածը աչքի չէր առնէր. այժմ զգացած է, տան տէրն որ շուռտներն սպառած են տան ամեն բարիք, կզգայ որ երկու ամիս ևս ձմեռ ունի իր առջև:

Մրցումը մեծ է, շուռտներն համարձակութիւն գտած և խումբեր կազմած են, կսպառնան սպառել տան ամեն բարիք. դոլվածը նեղը լծելով՝ դուռն արտաքսել՝ որպէս զի գրաւեն նոցա բնակարաններն ևս, և տան ամեն մասերու մէջ հաստատուին:

Ամեն հնար և միջոց ձեռք առնուած է, մրցումը սաստիկ է, շուռտի խումբը ամբողջ ձմեռն պատրաստի բարիքներն վայելած է և զօրացած, դոլվածն ցմիշտ զբաղուած էր շուռտի սպառածի տեղն լեցնել, որով յոգնած և լքուած է:

Մարդոց այժմ զգալի դարձած է որ տան բա-